

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՍՈՒՐԻԿ ԽԱՉԱՏՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆԵԴՅԱՆ ՕՐԿԱՆ ԵՎ ՊԱՏԱՆԻ ԵՐԿՐԱՊԱՀՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

Սիրելի՛ պատանի երկրապահ,

Հարգելի՛ հյուրեր,

Այսօր հպարտությամբ ենք նշում սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան օրը, որովհետև մեծ հայորդի Վազգենը մեզ պարզևեց հաղթանակի կամք ու ոգի, համախմբեց մեր ժողովրդի ուժերն ու հնարավորությունները և 20-րդ դարի վերջում մեզ պարզևեց արժանապատիվ արցախյան հաղթանակ:

Արցախյան ազատամարտի տարիներին սպարապետը հաջողությամբ ղեկավարեց մարտական գործողությունները և կարողացավ ողջ հայության ուժերը համախմբել մեկ նպատակի համար: Նա բոլոր ազատամարտիկների հրամանատարն էր ու մարտական ընկերը: Հսկայական է Վազգեն Սարգսյանի դերը ազգային բանակի կազմավորման գործում՝ կամավորական 1-ին ջոկատների ստեղծումից մինչև կանոնավոր բանակ: Իսկ զինադադարի տարիներին նա իրեն հատուկ անմնացորդ նվիրվածությամբ նպաստեց բանակաշինության և պետականության կերտմանը: Այսօր նա մեզ հետ չէ, բայց մեզ հետ են նրա ոգին, հայրնասիրությունն ու անմնացորդ նվիրումը հայոց ազգի շահերին:

Պատանի՛ երկրապահներ,

Ձեր երդումը և պատանի երկրապահի շարքերի համալրումը խորհրդանշում են սպարապետի ազգանվեր գործի հավերժությունն ու երկրապահական ավանդների շարունակական լինելը:

Սպարապետը սիրում էր նշել, որ ամենակատարյալ ստեղծագործությունը դա ազատագրված հողն է: Մեր սերնդի երկրապահները կարողացան ազատագրել Արցախն ու հարակից պատմական Հայաստանի հողերը:

Դուք պետք է հզորանաք այնքան, որ տեր կանգնեք այսօրվա մեր անկախությանն ու ինքնիշխան հայրենիքին, արցախյան հաղթանակին:

Դուք պետք է լցվեք այնպիսի ոգով, որ կարողանաք հզորացնել մեր երկիրն ու դառնաք պահանջատեր մեր պատմական հայրենիքին:

Եղեք արժանի անպարտելի սյունյաց հերոսներին, ովքեր դարեր ի վեր կռվել են ու պաշտպանել հայրտ ու անկախ ապրելու իրենց իրավունքը: Եղեք արժանի սպարապետի ազգանվեր անվանը:

Շնորհավորում եմ բոլորիս՝ սպարապետի ծննդյան օրվա և պատանի երկրապահների երդման կապակցությամբ: